ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՇԵՆ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արխիվային դաշակաշարեր նախատեսված արխիվացված փաստաթղթերի պահպանման համար: Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա կոնստրուկցիաներից՝ զոդման եղանակով, դարակաշարի ընդհանուր բարձրությունը 232 սմ, մետաղյա անկյունակով՝ 4x4 սմ չափով, 3 մմ հաստությամբ կողային մասով: Լայնությունը՝ 32 սմ, երկարությունը՝ 90 սմ: Դարակաշարը պետք է բաղկացած լինի 6 /վեց/ դարակներից: Դարակների շրջանակը 2,0x2,5 սմ չափով, 2,5 մմ հաստությամբ մետաղյա քառակուսի խողովակով: Դարակների հեռավորությունը մեկը մյուսից պետք է լինի 37 սմ: Դարակի հիմքը պետք է լինի 1 մմ հաստությամբ մետաղյա թիթեղից: Զոդման աշխատանքների ընթացքում զոդված տեղերը պետք է մաքրված և հարթեցված լինեն մնացորդներից: Բոլոր մետաղյա կոնստրուկցիաները պետք է ներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի գույնը և նմուշը պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Դարակաշարը պետք է լինի շարժական, բարձր որակի 4 հատ անիվներից կառուցված, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դարակաշար կրելու է 150 կգ-ից բարձր քաշ, իսկ 1 դարակի կրողունակությունը՝ ոչ պակաս 25 կգ-ից: Ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը, տեղադրումը և ամրացումը իրականացնում է Վաճառողը: Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել տեղադրման աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը: Նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման և տեղադրման հասցեն՝ ք.Երևան, Մամիկոնյանց 39ա, Մամիկոնյանց 46/5, Մամիկոնյանց 48 և ք. Գյումրի, Շիրակացու 68/1: Ապրանքների մատակարարումը և տեղադրումը իրականացվելու է պատվիրատուի հետ

	համաձայնեցնելուց հետո՝ ըստ համապատասխան հասցեների և քանակների: Երաշխիքային ժամկետ է սահմանվում ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ՇԵՆ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	